ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ

ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Է. դարու առաջին կիսում Շինողի ձեռամբ այսպէս կարգաւորուած ժամակարգութիւնը մնաց առ ժամանակ։ Ինչպէս նախընթացներում տեսցինք, Եկեղեցւոյ ծիսական մասը զարգացման ենթակայ է, ինչպէս օտար Եկեղեցեաց՝ նոյնպէս և մեր Եկեղեցւոյ համար։ Յառաջ են գալիս թէ՛ ազգային և թէ՛ օտար ազգերի սուրբեր ու նահատակութիւններ, որոնք Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցւոյ սեպհականութիւն են կազմում, և ոչ թէ մի ազգի – օրինակ՝ Յոյնի կամ այլոց –, որի մէջ նահատակուել կամ մարտիրոսացել է այդ սուրբը։ Այս դէպքում, Եկեղեցին պարտական համարելով իրեն երախտագիտութիւնը արտայայտելու, սահմանում է նրանց յիշատակի համար օրեր։ Եկեղեցւոյ սրբազան Հայրերը երգեր են հիւսում այդ մարտիրոսների անուան ձօնուած, այդ երգերի մէջ յիշում նահատակի գործը, այլև բարեխօս ունելով զնոսա առ Հայր։

Կարելի է ասել նաև, որ մինչև Է. դարը Եկեղեցու սահմանած տօները շատ պարզ էին. մի օր միայն կը տօնուէր, ուուր պատշաճի երգերի մէջ կը յիշատակուէր օրուայ տօնելին։ Թէ՛ ստարամուռ սովորութեամբ և թէ՛ կրօնական ջերմեռանդութեամբ սկսում են մի օրուայ փոխարէն մի քանի օր յիշատակել. այսպիսով, միօրեայ տօնը դառնում է բազմօրեայ։ Այդ թուերը խորհրդաւոր են. 1, 3, 7 օրեր։

Տօների բազմանալովը կամ միօրեայ տօնը բազմօրեայ դառնալովը, բազմանում կամ լաւ ևս է ասել հիւսւում են նոր երգեր։ Եկեղեցական Հայրերը նոր տօներ կարգելով, պիտի հոգ տանէին գայն տարածելու ամէն կողմ, և նոյնպէս պիտի հոգային 'ի պատիւ տօնելեաց հիւսած երգերն էլ տարածելու։ Ինչպէս երեւում է պատմական ակնարկումից, ընտրըւում են երգեցողութեան գիտակ անձինք, որոնք շրջում էին Հայաստանի գանազան գաւառները և ուսուցանում եկեղեցական երգերը։ Այդ պատմական ակնարկը որ վերօյիշուեցաւ, կրկին մէջ եմ բերում, որովհետև մեզ համար գնահատելի է այս գրեթէ միակ փաստը, որից հանում ենք վերօյիշեալ եզրակացութիւնը։ Ահա՛ այդ ակնարկը. – «... և ընտրեցին արս իմաստունս, զի սրջեսցեն ընդ ամ. աշխարհս հայոց եւ զնոյն կարգաւորութիւնս հաստատեսցեն» (Կիրակոս Գանձակեցի, էջ 34–35, 6 տող)։

Սոյն այս ձևը, երգերը տարածելու, յետոյ կը տեսնենք Ներսէս Շնորհալու օրօք, բայց պէտք է երևակայել թէ՝ այսուամենայնիւ որքա՜ն դժուար էր հայոց աշխարհի բոլոր ծայրերում (եկեղեցական) աստուածպաշտութեան մէջ նմանութիւն և կարգ պահպանելը, քանի որ հետզհետէ աւելանում են նոր երգեր։

Եօթներորդ դարում և ապա յառաջ են գալիս եկեղեցական նոր երգիչներ. այս կարգում կարելի է յիշել Անանիա Շիրակացուն, Սահակ Ձորափորեցուն, Յովհան Օձնեցուն(*), Ստեփանոս (Բ.) Սիւնեցուն, Պետրոս Գետադարձին, Գրիգոր Մագիստրոսին, Յակոբ Սանահնեցուն, Գրիգոր Վկայասէրին, Յովհաննէս Սարկաւագ(**) Վարդապետին և վերջապէս Ներսէս Շնորհալուն, այսինքն՝ ԺԲ. դարու երկրորդ կէսը, որովհետև երկրորդ խմբագրութիւնը դրւում է մօտաւորապէս այդ ժամանակները։

(*) Օձնեցու համար Կիրակոս գրում է. «... և երգեաց Շարական հարցին ամեղաք յամենայնի և գպատուիս, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս հայոց, սկսեալ ճՀԵ թուականէ մինչև ՌՁ թուականս, որ այժմ յաւուրս մեր էս. – 39 էջ, Կիր. Գանձ.։

(**) «... արար և շարական Ղևոնդեանցն քաղցր եղանակաւ, և յարմար բանիւ, որոյ սկիզբն է այս. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք"»։ Նոյն։

digitised by A.R.A.R.@

Այժմ, հարց է յառաջ գալիս, թէ ո՞վ է խմբագրել կամ կարգաւորել այդ ժամանակ շարականը և ժամապաշտութիւնը ընդհանրապէս։ Երկու անձինք աւելի հաւանական կը թուին մեզ, այդ կարգաւորութեան գործում. մին՝ Ներսէս Շնորհալին և միւսը՝ ԺԲ. դարու վերջին քառորդին՝ Գէորգ Սկեւռացին, որը այդ ժամանակ յայտնի գիտնական էր և վարժապետ։

Ներսէս Շնորհալու մասին գիտենք. «... Բազում ինչ կարգեաց յեկեղեցի քաղցր եղանակաւ Յոտրվեան ոճով շարակնս ... Արար նա երգս և ուսոյց իսկ մայնոցիկ, որք պահէին զերդն (Հոմկլայու), զի փոխանակ վայրապար ձայնից զայն ասացեն, որոյ սկիզբն է 'ի ուղմասէն Դաւթի «Յիշեսցուք 'ի գիշերի զանուն քո Տէր» և այպէս խորհրդաբար ըստ կարգի, «Զարթիք փառք իմ», որ այժմ ասի յեկեղեցի 'ի ժամ գիշերային պաշտամանն։

Եւ այս, մեզ կարծել է տալիս, որ Ներսէս Շնորհալին հոգ է տարել յատկապէս ժամագիրքը կարգաւորելու, նայն իսկ ժամագրքի երգերից մեծ մասը ինքն է հեղինակել. ուստի, հաւանական է թուում շարականների կարգաւորումն Ներսէս Շնորհալու ձեռքով։ Գրել է շատ ճաւեր։ Որովհետև, երկրի աւերածութեան պատճառով խանգարմունք էր մտել ժամակարգութեան մէջ, ուստի, Մաքենայ և Թեղենեայ վանքերից և նոյնպէս մեծ Հայաստանի նշանաւոր վանքերից բերել առաւ ժամագրքի հին օրինակներ, որովհետև վանքերը միակ աւանդապահ վայրերը լինելով՝ անխախտ և ճշգրիտ օրինակներ կարող էին ունենալ, թերին ուղղեց, լրացուց։

Բայց մեզ այնքան էլ հաստատ չէ թուում Ներսէս Շնորհալու շարականներ կարգաւորելը. վանքի նախ որ Վարդան Բարձրբերդցին և Կիրակոսը, որոնք Շնորհալուն ժամանակակից են, չեն յիշում այդ և դժուար թէ թերանային զայդ հաղորդելու. երկրորդ՝ էլ ինչո՞ւ Գանձակեցին կամ Վարդանը անդադար յիշատակելով «Ճանընթիրը» ասում են, որ այժմ պաշտի յեկեղեցիս մերոյ։ Մանաւանդ որ եթէ այդպիսի բան լինէր, Վարդանը անպայման պիտի յիշատակէր, որովհետև ան Երուսաղէմից վերադառնալու ժամանակ, բաւականին (մօտ 6 տարի) մնում է Յակովբ Կլայեցի կաթողիկոսի հրաւիրանոք Հռոմկլայում, և եթէ լինէր, այնտեղ պիտի ծանօթանար և յիշատակէր Գուցէ ճանընթիրից յետոյ աւելացած երգերը առանձին տետրակներով կամ շրջիկ կարգաւորիչների ձեռքով տարածել է։

Հայր Ալիշանի «Միսուանոյ»ի մէջ մի շատ կարևոր փաստ ենք գտնում, որով այս երկրորդ խմբագրութեան կարգաւորիչը համարում ենք Գէորգին (Սկեւռացին)։

Խօսելով Սկեւռացու գրչոցի մասին, ասում է. «Մատանայ գրաւարիչն կամ ոչ պարզապէս յիշէ զմիւս ևս յոյժ պիտանի հատարակաց գործ, որ և յայտարար առուգաստէր և չափագիտակ հանճարոյ Գէորգայ, այն է ptisrութիւն եւ հատատութիւն քանից եւ եղանակաց շարականաց մերոյ։ Զանօր է բանասիրաց, զի 'ի ձեռագիր յիշատակարանս երգարանիս, անդբատին 'ի սկզբանէ ԺԳ. դարու 'ի յոլովս նշանակի գրեալ ըստ լաւ և ընտիր օրինակին, որ կոչի Ալկցի և յամանս վկայի, զի ընտրեալն այն էր Գրիգոր առաջին վարժապետ Սսայ և քաջ քարտուղար, մականուանեալն Խուլ։

Արդ, Առաքել Սիւնեաց Եպիսկոպոսն 'ի լուծմանս Սահմանաց Դաւթի Անյաղթի, ասէ. «Ճշմարտեալ բանք երգոցս Ալկու օրինակն է' 'ի շարականացն, զոր մեծ դպրապետն Գէորգ ուղղեաց, այն որ զեսայի մարգարէն մեկնեաց 'ի խնդրոյ Հեթումի թագաւորին 'ի Սիս ... զի արեւեան առգանութեան խառնեալ լիցի 'ի յերգսն, որպէս նոյն Ալոյն օրինակն է, զոր սահմանեաց վարդապետն Գէորգ»(*)։

Ինչպէս երևում է ընդգծածներից, եթէ երկրորդ խմբագրութիւն ընդունենք, պէտք է հաստատապէս ասենք, որ դա առել է Գէորգ Սկեւռացին ԺԳ. դարու վերջին քառորդում։ Գուցէ եղանակների կարգաւորման սրան գործակցել է Սսի վարժապետ՝ յայտնի Գրիգորը, մականուանեալն Խուլ։

(*) «Միսուանոյ», էջ 104, բ. սիւնակ, §106 էջ, ա. սիւնակ, 1 տող։

digitised by A.R.A.R.@

Ուստի, երկրորդ խմբագրութեան մէջ կը մտնէին երգերը հեղինակներիս՝ Անանիա Շիրակացու, Սահակ Զորափորեցու, Յովհան Օձնեցու, Ստեփանոս (Բ) Սիւնեցու, Ստեփանոս Մոկացու, Պետրոս Գետադարձի, Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Պաչատուր Տարօնցու, Մեծին Վարդանայ, Յակոբոս Կլայեցու և Գէորգ Սկևռացու։

Ընդհանրապէս այս հեղինակների մեծ մասը նոր ոճերի համար յատուկ երգեր չեն հիւսել, այլ ոճն կիւրակէ օրերի, և բազմօրեայ ոճերի միւս ուրբաթ շաբաթները։

Ուրեմն, երկրորդ անգամ շաբաթների կարգաւորումն հաւանական են կարծում Գէորգ Սկևռացու ձեռքի Ժ. դարու վերջին, և ուելցած կը լինին վերոյիշեալ հեղինակաց երգերը։

ԵՐՐՈՐԴ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՇԱՐԱԿԱՆԻ

Ներկայումս մեր ձեռքին եղած Շարականը հարկաւ ԺԴ. դարու Շարականներից տարբերութիւն ունի, վանդի ԺԴ. դարուց յետոյ նոր ոճներ են ուելացել։ Մեր համեմատած ձեռագիր Շարականներում նոյնիսկ կան այնպիսիները, որք չեն մուծուած տպագրուածի մէջ, ինչպէս Շարական Համամայ, Կանոն Սրբոյն Աբուսիմուսէիայ, Շարական Տարագոսեանց, այլ հարց Աւետեաց Աշծենի, ևն., որոնք ամբողջութեամբ պիտի կցենք սոյն գրութեանս 'ի հետազօտութիւն յարգոյ բանասիրաց։ Վերոյիշեալ Շարականի տպագրութեան մէջ չմուծուած լինելը բացատրում ենք նրանով, որ այդ շարականները կամ ոճները մի որոշ շրջանում են յառաջ եկել, չեն ընդհանրացել, ուստի և ոճնցոյցի ու պաշտամունքի մէջ չեն մտել։

Մի անթուական մագաղաթեայ գրչութեան մէջ, № 1573 (որի նիւթից երևում է հին լինելը), պահպանում է ԺԴ. դարու սկզբում հիւսուած «Խորհուրդ խորին» երգը, «Այսօր զուարճացեալ», «Ամենասուրբ Երրորդութեանն»(*), «Արևելք գիւրփինն» (ժ. դարու) կիրակս Արևելքս, «'ի յանահման ծալէնն» մեծ Վարդանինը, «Սարգսափելի որոտմամբ» Սարգիս Սանեցու։

ԺԴ. դարու մի թղթեայ գրչութեան մէջ (№ 1598 և № 1615) պահպանում են վերոյիշեալ շարականներից չատերը, որ յետոյ է ուելցուած ուրիշ գրչի ձեռքով։

Այս թերութիւնները 'ի նկատի ունենալով, կարծում ենք որ մի երրորդ անգամ կարգաւորուել է Շարականը, և այդ այն ժամանակ միայն, երբ արդէն հիւսուած էր Վերափոխման Անձինք Շարականը՝ կիրակս Արևելքս ձեռքով։

ԺԵ. և ԺԶ. դարերի ձեռագիր Շարականները վերջանում են «Արևելք գիւրփինով». նոյնպէս և մեր այժմու ձեռքի տպած Շարականը այդ երգով է վերջանում։ Այս վերջին կէտը զօրեղ փաստ է, որ երրորդ կարգաւորումն շարականաց տեղի է ունեցել ԺԵ. դարում։

Այս երրորդ կամ վերջին խմբագրութեան անհրաժեշտութիւնը յառաջ է գալիս նրանից, որ ԺԴ. դարուց սկսեալ, Հայոց աշխարհը անհանգիստ և ուեր վիճակի մէջ էր։ Կաթողիկոսական Ս. Աթոռը երկրի սրտից — Արարատեան աշխարհից — փոխադրուած էր Կիլիկիա, ժողովրդի մեծամասնութիւնից հեռու, ուստի և եկեղեցու դէմը դժուարանում էր յաճախել հոգեզութիւնը։ Ճշմարիտ է, Հայաստանումն էին հռչակաւոր և մեծ վանքերը, որոնց մէջ մշտամռունչ աղօթում և աշխատում էին մեծանուն և հանճարեղ վարդապետներ, բայց այլազանց յաճախակի յարձակմունքները միջոց չէին տալիս այդ սրատցաւ վարդապետներին եկեղեցու ներքին բարեզարգութեամբ մտածելու և զբաղուելու։

ԺԵ. դարում կատարուած պատմական մի կարևոր փաստ մեզ ուելի ևս համոզում է պնդելու և հաստատելու այս երրորդ խմբագրութիւնը։ Այդ փաստը Հայրապետական Ս. Աթոռի Սսից Ս. Էջմիա-

(*) Ս. Սարգսի ոճնը հաւանօրէն հաստատուած է Ն. Շնորհալու ժամանակից։ Սա Միքայել Ասորուն յանձնեց, որ Ս. Սարգսի աւանդութիւնը Ասորերէնից թարգմանի Հայերէնի։ Ուստի հաւանական է այդ ժամանակից հաստատուած լինի Ս. Սարգսի յիշատակութիւնը եկեղեցու մէջ։

digitised by A.R.A.R.@

ծին փոխադրութիւն է, որից յետոյ կիրակոս կաթ. Վիրապեցին ձեռնարկում է Եկեղեցու ներքին բարեզարդութեան։ Կիրակոս կաթողիկոսը այդ դարու եկեղեցու պետերից ամենաեռանդունն ու ամենանշանաւորն է։ Այն հոգածութիւնն ու խնամքը, որ նա տածում էր առ վայրավատեալ ու վշտակիր հօտը, սորա յետնորդների մէջ աւելի նուազ կ'երեւի։ Եւ այս բոլորը մեզ բերում է կատարեալ համոզման, որ նա հոգ տարած լինի նաեւ համակարգութեան վերայ։ Կամ նա ինքն, կամ սորա ժամանակ այդ գործը պէտք է գլուխ եկած լինի։

ԺԵ. դարում յայտնի է Կիրակոս Արեւելցի կամ Երզնկացի, իբրեւ գրագէտ եւ բանիբուն եկեղեցական, որ Յովհաննէս Երզնկացու առաջին աշակերտն է։ Համառօտած Յայսմաւուրքի մէջ, Կիրակոս՝ երգիչ, խմբագրող է անուանուած։ Տպագրած Շարականը, ինչպէս եւ ուշ գրչագիրներ, վերջանում է Վերափոխման անձին «Արեւելք գերարփին» շարականով։ Այս շարականի վերջին տան սկզբնատառերը Կիրակոս անունն են կազմում։ Եւ որովհետեւ ԺԵ. դարում Կիրակոս Արեւելցին է յայտնի, ուստի վերջնական կարգաւորումն հաւանօրէն Կիրակոսին կը տամ, որ իւր շարականով կը փակէ մեր Ս. Եկեղեցւոյ յոգնաջան հարց սրտաբուղխ երգերը։

Այս նոր կարգաւորման մէջ շատ քիչ հեղինակաց երգերը կը մտնեն, նախկին հեղինակաց դուրս մնացած մի քանի երգերը, այլ եւ Յովհան Երզնկացու եւ Կիրակոս Արեւելցու։ Սակայն, այս կարգաւորումն ըստ իս, աւելի ներքին բաժնին կը վերաբերի, այսինքն՝ երգերը դասաւորել ըստ պատկերաց տօնից։

Սակայն, այս խմբագրութիւնից էլ դուրս մնացին մի շարք շարականներ, որոնք ինչպէս երեւում է, ընդունուած չէին եւ չէին ընդհանրացած եւ կամ տօնացոյցի մէջ մուտք չէին գործած։ Այսպիսիք են մեր նախընթացներում յիշատակած շարականները, որոնք մենք ենք գրել ձեռագրաց համեմատութեան ժամանակ, եւ Վարդանանց մի այլ շարական՝ «Անթառամ սիրոյ ծնունդք», «Թագաւոր գալով»ի շարունակութիւնը, Ս. Սարգսի,

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԵՂԵՐԱՄԱՀ ՎԱԽՃԱՆ Տ. ՂԵՒՈՆԴ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆԻ

«Սիոնի ներկայ թիւը մամուլին յանձնուած՝ եւ տպագրութիւնը մօտ էր արդէն լրանալու, երբ հեռագիրը երէկ (26 Դեկտ.) բերաւ մեզի սարսռազդեցիկ գոյժը թէ Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Ղեւոնդ Արքեպս. Դուրեան երկու օր առաջ, Կիրակի, սպաննուած է Նիւ Եորքի եկեղեցիին մէջ, պատարագած միջոցին։

Մանրամասնութիւնք կը պակսին առնչուշտ տակաւին. եւ մենք ի զուր միամըտութիւնը ցանկացինք ունենալ գիշեր մը եւ ցերեկ մը ակնկալելու թէ յաջորդ հեռագիր մը կրնար հաանիլ, հերքելու համար սոսկալի լուրը. եւ սակայն կը զգանք այլեւս թէ կը գտնուինք արդէն ցաւագին եւ անհարկու իրականութեան մը առջեւ, ողբալու համար կորուստը բազում առաւելութիւններով զարդարուած ընտիր Հովիւի մը, որ զանազան պատենութիւններով եւ պաշտօնավարութիւններով արժեցուցած էր ցարդ ինքզինքը, եւ որ, վստահ էինք թէ հետզհետէ պիտի հանդիսանար Հայ Եկեղեցւոյ ամենէն մեծարժէք դէմքերէն մին։

(«Սիոն», 1934, Ը. Տարի, Յունուար, Թիւ 1, էջ 31):

Ս. Ցակոբու, Թէոդորոս զօրավարի մի մի երկրորդ շարականները։

Այսպէս ուրեմն, ընդունում ենք երեք գլխաւոր խմբագրութիւններ։ Այս խմբագրութեանց ժամանակները եւ դարագլուխ կարելի է համարել թէ՛ Եկեղեցու ներքին եւ արտաքին բարեզարդութեան, եւ թէ՛ հայ լեզուի զարգացման։ Այս խմբագրութեան հետ եկեղեցական հեղինակները բաժնեցինք երեք կարգի. — Առաջին խմբագրութիւն՝ Ջօնի ձեռամբ, Է. դարում, երկրորդ խմբագրութիւն՝ Գէորգ Սկեւռացու՝ ԺԳ. դարում, եւ երրորդ (աւելի քան կարգաւորումն) ԺԵ. դարում՝ Կիրակոս Արեւելցու ձեռամբ։

ՎԱՀԱՆ ԲԺՇԿԵԱՆ

(Շարունակելի՝ 4)

digitised by A.R.A.R.@